Î ðÂàôÂÚ²Ü Î àØÆî º

Ð²Þì º î ì àôÂÚàôÜ

Նախագահ՝ *բ.գ.թ. Գևորգ Վիգենի Յաղջյան*

26 հունվարի 2004 թ.

Հայկական Բժշկական Ասոցիացիայի Կրթության Կոմիտեն (ՀԲԱ-ԿԿ) առողջապահության ոլորտում կրթության հարցերի ուսումնասիրման, վերլուծման և կարգավորման մարմին է, որն իրականացնում է նոր և պահպանում գործող կրթական ծրագրերը ՀՀ առողջապահության համակարգում:

1. **Գիտական սեմինարների կազմակերպում.**
   Սեմինարները անց են կացվել ԵրՊԲՀ ընտանեկան բժշկության ամբիոնի լսարանում՝ մասնակիցների նախնական տեղեկացմամբ: FAR-FAA Salzburg Seminars-ի հետ համատեղ պոլիկլինիկական օղակի բժիշկների համար կազմակերպվել են հետևյալ սեմինարները.
   - **a.** Վերին վերջույթի վիրաբուժություն (6 դասախոսությունների ցիկլ Ֆրանսիայից հրավիրված մասնագետների հետ համատեղ);
   - **b.** SARS – ոչ սպեցիֆիկ թոքաբորբ;
   - **c.** Սրտաբանություն, սրտավիրաբուժություն Վանաձորում (Նորք-Մարաշ բժշկական կենտրոնի հետ համատեղ);
   - **d.** Անհետաձգելի մանկաբուժություն;
   - **e.** Միզապարկի քաղցկեղ:

2. **Ապացուցողական բժշկության ուսուցում.**
   Անց են կացվել կարճ գիտական սեմինարներ.
   - **a.** Երևանում – ՀՀ ԱՆ Ուռուցքաբանության ինստիտուտում՝ Հայաստանի Ամերիկյան Համալսարանի առաջատար փորձագետների մասնակցությամբ;
   - **b.** Ստեփանակերտում:
     BMJ-ից ստացված Evidence Based Medicine (EBM) գրականությունը թույլ կտա մեզ սկսել բժշկության առանձին բնագավառների համար տպագիր նյութերի պատրաստումը: Նախապատրաստված է դրամաշնորհի նախագիծը, որը գտնվում է դիտարկման փուլում:

3. **Շրջանների լավագույն բժիշկների ուսուցման ծրագրեր ՀՀ և արտասահմանի առաջատար բժշկական կենտրոններում.**
   Անց է կացվել մրցույթ գլխացավի թեմայով գիտաժողովին մասնակցելու համար: Մշակվել են այդ մրցույթին գրվելու հատուկ ձևեր, անգլերենի իմացության քննություն: Անգլերենի քննության արդյունքներով առանձնացվել են հիմնական թեկնածուները, որոնք վերջնականորեն ընտրվել են հատուկ հանձնաժողովի կողմից: Տվյալ ծրագիրը հնարավոր դարձավ իրականացնել Տորոնտոյի Հայ Բժիշկների Ասոցիացիայի (AMCAO) կողմից հատկացված դրամաշնորհի օգնությամբ: Բացի այդ, նախապատրաստվում է Երիտասարդ Բժիշկների Երկրորդ Միջազգային Գիտաժողովի 2 հաղթողների այցը Ֆրանսիա:

4. **Բժիշկների համակարգչային և ինտերնետ ուսուցում.**
Վերջին ժամանակներս, ապացույցների վրա հիմնված բժշկության (ԱՀԲ) օրեցօր զարգացման ու առաջընթացի հետ, հատկապես արդիական է դարձել կատարված հետազոտությունները, գիտական աշխատանքները, սիստեմատիկ ակնարկները և այլն ավելի ակնառու և գիտականորեն հիմնավորված ձևով պատրաստելու և ներկայացնելու խնդիրը՝ միևնույն ժամանակ խնայելով բժիշկ-գիտնականի ժամանակային ու ֆինանսական միջոցները: Մյուս կողմից, դեռ մինչ օրս Հայաստանում կան բժիշկներ (որոնց մի մասն ընդ որում բավական հմուտ և պրոֆեսիոնալ մասնագետներ են), որոնք այս կամ այն պատճառով չգիտեն օգտվել ժամանակակից գիտության և տեխնոլոգիաների ընձեռած այնպիսի բացառիկ գործիքներից, ինչպիսիք են օրինակ վիճակագրության, շնորհանդեսների, մեջբերումների և այլ համակարգչային ծրագրեր: Հաշվի առնելով վերը նշված իրավիճակը, բժիշկների ընդհանուր կրթական և ինչու չէ՝ նաև մասնագիտական մակարդակը բարձրացնելու նպատակով՝ Հայկական Բժշկական Ասոցիացիայի Կրթության Կոմիտեն (ՀԲԱ-ԿԿ) կազմակերպելու է հետևյալ, առավել հաճախ կիրառվող համակարգչային ծրագրերի էքսպրես-դասընթացներ:

5. **EndNote 7.0 – մեջբերումների ծրագիր՝ reference manager.**
Պատրաստված են EndNote ծրագրի պարապմունքների նյութերը: Նախատեսվում է դասընթացը սկսել 2004թ. փետրվարին:

6. **Բիոստատիստիկա.**
ՀԲԱ գրասենյակում ՀԲԱ անդամներին «Ստատիստիկա» առարկայի ուսուցանում և նրա կիրառում գործնականում գիտական ուսումնասիրությունների, մասնավորապես, բժշկագիտական հետազոտությունների, առողջապահության կազմակերպման և այլ ոլորտներում: Դասընթացը օգտակար կլինի հատկապես *ցանկացած տիպի գիտական հետազոտություններում* ընդգրկված անձանց համար: Դասընթացը նախատեսում է 8 պարապմունք (2 ամիս, շաբաթական 1 անգամ): Պատրաստված են տպագիր նյութերը:

7. **Փոխանակային ծրագրեր Հայոց Սփյուռքի ուսանող-բժիշկների համար.**
Սփյուռքի հայ բժիշկների տվյալների բազայի միջոցով ուղարկված է տեղեկատվություն այն մասին, որ հայ ուսանող-բժիշկները կարող են անցկացնել ամառային պրակտիկա Հայաստանում: Ներկայումս ունենք ԱՄՆ-ից 2 պայմանագիր:

8. **Անկախ բժշկաէկոնոմիական լաբորատորիայի ստեղծում.**
Սկսվել են դոնոր կազմակերպությունների հետ երկխոսությունները՝ նախագծի ֆինանսավորման հետ կապված: Մշակվել է նախագծի բիզնես-պլանը: Ներգրավված են գիտահետազոտական ինստիտուտների ղեկավարներ, գիտնականներ, ուսանողներ:

9. **Էթիկ կոմիտե.**
Կայացել է ՀՀ ԱՆ Պետական էթիկ Կոմիտեի (ՊԷԿ) հետ կոնսուլտացիայի առաջին փուլը՝ կապված տեղային կոմիտեների ստեղծման հնարավորության հետ: Առաջին ժողովի ժամանակ ՊԷԿ քարտուղարը ներկայացրեց գործի դրությունը Հայաստանում տվյալ առումով, ինչպես նաև տվեց անհրաժեշտ փաստաթղթերի ցուցակը: Կազմվել է ՀԲԱ էթիկ կոմիտեի ստեղծման նախաձեռնող խումբ: Տարվում են թղթային աշխատանքները:

10. Կլոր սեղաններ.

ՀԲԱ նախաձեռնությամբ մենք հանդես ենք եկել մի քանի ժողովում զեկույցներով՝ նվիրված հետևյալ հարցերին.

a. Ստանդարտները բժշկության մեջ
b. Հասարակական կազմակերպությունների դերը առողջապահության գործում

11. ՀԲԱ-ի ներկայացում հասարակությանը.

Անց են կացվել հետևյալ հանդիպումներն ու խորհրդատվությունները.

a. ԵրՊԲՀ 5-6-րդ կուրսի ուսանողներ;
b. Արցախի կլինիկական օրդինատորներ;
c. ՀՀ ԱՆ Ուռուցքաբանության ինստիտուտի անձնակազմ;
d. Արցախի բժիշկների ՀԿ;
e. Սփյուռքահայ ուսանողներ, բժիշկներ, կլինիկական օրդինատորներ;
f. Ռոտարի միջազգային կազմակերպություն:

12. Դրամաշնորհային ծրագրեր.

Ներկայացվել են հետևյալ նախագծերը.

a. Կանանց առողջություն (հավանության չի արժանացել ԲՀԻ-ի կողմից)
b. Հիվանդների գիտելիքների մակարդակի բարձրացում՝ տարբեր հիվանդությունների առումով (հավանության չի արժանացել ԲՀԻ-ի կողմից)
c. Հիվանդների գիտելիքների մակարդակի բարձրացում ուսումնական գրքույկների օգնությամբ - գնտվում է Aid Armenia ՀԿ դիտարկման տակ
d. Ապացուցողական Բժշկության գրքույկներ - գնտվում է Aid Armenia ՀԿ դիտարկման տակ